ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝

ՊԱՐՈՆ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ.

Տեղեկացվում է Ձեզ, որ Արմավիրի մարզի «Հայկաշենի Գ. Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի համար հայտարարվել է մրցույթ:

Մրցույթը կկայանա 2022թ. ապրիլի 20-ին՝ ժամը 14^{00}-ին:

Կից ներկայացվում են քաղվածք կառավարման խորհրդի համապատասխան նիստի № 4 արձանագրությունից և հայտարարության տեքստը:

Առդիր՝ 1 թերթ և 1 էլեկտրոնային նյութ:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Կ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

16.03.2022թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 1-04758-2022
16 03 2022

Հայտարարություն

ՀՀ Արմավիրի մարզի « Հայկաշենի Գ. Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց» «Մեծամորի միջնակարգ դպրոց», «Արաքսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ների կոլեգիալ կառավարման մարմնի՝ միացյալ խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր պաշտոնի համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1. ՀՀ քաղաքացիությունը,
2. «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը:

   Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝
   1. Դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով,
   2. ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը (բնօրինակի հետ),
   3. Հաստատության ղեկավարման իրավունքի/հավաստագրի/ պատճենը (բնօրինակի հետ),
   4. Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը /որը հավակնորդը կարող է ներկայացնել մինչև գործերի ընդունման ժամկետի ավարտը/ /այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով/ , որը խորհրդի որոշմամբ լիազորված խորհրդի անդամը հավակնորդի կողմից տրամադրելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հրապարակման տվյալ դպրոցի պաշտոնական կայքում, ինչպես նաև տրամադրում է խորհրդի մյուս անդամներին,
   5. Ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Փաստաթղթերն ընդունվում են 2022թ. մարտի 17-ից մինչև ապրիլի 6-ը ներառյալ, ամեն օր ժամը 9:00-ից մինչև 15:00, բացի շաբաթ , կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից, « Հայկաշենի Գ. Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ – ում:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի ապրիլի 20-ին, ժամը 14:00-ին Հայկաշենի Գ. Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Հայկաշեն, 3-րդ փող. 4 շենք:

Տեղեկությունների համար դիմել
Հեռախոս՝ 093-83-45-35
Էլ. Փոստ՝ sh_avdalyan@mail.ru:

ՔԱՂՎԱԾՔ

«Հայկաշենի Գ. Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի
կառավարման խորհրդի 2022թ. մարտի 15-ին կայացած № 4 արձանագրությունից

Նիստը գումարվել է 2022թ. մարտի 15-ին:

Նիստին մասնակցում են խորհրդի 14 /տասնչորս/ անդամները:

ՕՐԱԿԱՐԳ

1. «Հայկաշենի Գ. Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ անցկացնելու մասին

զեկ. խորհրդի նախագահ՝ Կ.Մարգարյանը

ԼՍԵՑԻՆ՝

Կամո Մարգարյանը ներկայացրեց, որ «Հայկաշենի Գ. Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում անցկացվելու է դպրոցի գործադիր տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ:

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2021թ. փետրվարի 11-ի N 161-Ն որոշման երկրորդ կետի երկրորդ ենթակետը՝ այն է՝ Հաստատության կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը, 3 աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթի հայտարարելու մասին որոշում: Խորհուրդը, տնօրենի թափուր պաշտոն առաջանալու օրվանից հաշված, առավելագույնը եռամսյա ժամկետում (չներառելով դպրոցական արձակուրդների, արտակարգ և ռազմական դրության ժամանակահատվածը) կազմակերպում և անցկացնում է տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ:

Հիմք ընդունելով վերոնշյալը, ինչպես նաև դպրոցական արձակուրդի ժամկետները՝

ՈՐՈՇԵՑԻՆ

«Հայկաշենի Գ. Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի համար անցկացնել մրցույթ:

Փաստաթղթերի ընդունման ժամկետ սահմանել 2022թ. մարտի 17-ից ապրիլի 6-ը ներառյալ՝ մինչև 15:00-ն:

Մրցույթը նշանակել 2022թ .ապրիլի 20-ին՝ ժամը 14:00:

Խորհրդի որոշումը ներկայացնել ՀՀ ԿԳՄՍ նախարարին և ՀՀ Արմավիրի մարզպետին:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Կ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ